ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 07/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 15 դեկտեմբերի 2023թ.

2023 թվականի նոյեմբերի 24-ից մինչև դեկտեմբերի 10-ը ներառյալ Բյուրեղավանի համայնքապետարանը կազմակերպել է Բյուրեղավան համայնքի **ավագանու «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին»** նորմատիվ որոշման նախագծի վերաբերյալ հանրային քննարկումներ: Հանրային քննարկումների մասին հրավերը հրապարակվել է Բյուրեղավանի համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային կայքում՝ (տես՝ http://byureghavan-kotayk.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=84d808c3-56c7-4997-9bc0-212e9f7e47d3 հղումով), ֆեյսբուքյան էջում, իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում՝ (e-draft), ինչպես նաև փակցվել է Բյուրեղավանի համայնքապետարանում, ՀՈԱԿ-ներում, Նուռնուս և Ջրաբեր բնակավայրերում առկա ցուցատախտակներին:

**Օրակարգում՝**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու՝

1. **«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին»** որոշման նախագծի վերաբերյալ հանրային քննարկումներ:

Նոյեմբերի 24-ից մինչև դեկտեմբերի 10-ը ներառյալ էլեկտրոնային եղանակով կայացած քննարկումների ընթացքում ներկայացված նախագծի վերաբերյալ շահագրգիռ անձանց կողմից առաջարկություններ և կարծիքներ չեղան:

**Որոշեցին՝**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշման նախագծին հավանություն տալ և գնահատել դրական:

Քննարկումների պատասխանատու և վարող՝
Բյուրեղավան համայնքի ղեկավար՝ Հ. Բալասյան

Ջրաբեր բնակավայրի վարչական ղեկավար՝ Բ. Դավթյան

Արձանագրող՝ Բյուրեղավանի համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղար՝ Լ. Ավուշյան